ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 39-Ա

<<21>> հունիսի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՆՈՂՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N 13 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդհոդվածի 1-ին մասի 7-րդ կետի <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով, կարևորելով համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ /նախադպրոցական ուսումնական հաստատություն /մանկապարտեզ/, երաժշտական դպրոց, արվեստի դպրոց/ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության և դաստիարակության, գեղագիտական և մշակույթային զարգացման աջակցության անհրաժեշտությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>>, <<Լանջիկի Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>>, <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, <<Մարալիկի երաժշտական դպրոց>> <<Մարալիկի արվեստի դպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկներ /հետագայում՝ կազամակերպություններ/ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար սահմանել ծնողական վճարումների զեղչեր՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>>, <<Լանջիկի Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>>, <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, <<Մարալիկի երաժշտական դպրոց>> <<Մարալիկի արվեստի դպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկների /հետագայում՝

կազմակերպություններ/ տնօրեններին.

ՈՒսումնասիրել և հաշվառել համապատասխան կազմակերպություններ հաճախող սույն որոշման հավելվածում նախատեսված ընտանիքների սոցիալական կարգավիճակը և 2023 թվականի հուլիսի 1-ից շահառու հանդիսացող ընտանիքների համար կիրառել ծնողական վճարումների համապատասխան զեղչեր և ամենամսյա տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարան:

3. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և համայնքային բյուջետային հիմնարկներ հաճախող անապահով ընտանիքների երեխաներին ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումներից զեղչելու մասին>> N 13 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<21>> հունիսի 2023 թ.

քաղաք Մարալիկ